ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Արտաշատ,Օգոստոսի 23, 62
г.Арташат ул.Огосмосu 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ. /Тел./Tel/ /0235/2-23-83
/010/ 25-05-19
Էլ.փոստ / E-artashatmeria@artashat.am

Ն Ե – 2370

«21» 04 2026թ.

ԼԵՎՈՆ ՂԱԶԱՐՅԱՆ Ա/Ձ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղազարյան

1. Արտաշատի համայնքապետարանի և <<Լևոն Ղազարյան >> Ա/Ձ -ի միջև 2026 թվականի հունվարի 15-ին կնքվել է ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/03 ծածկագրով պայմանագիր :
Կնքված պայմանագրի շրջանակներում կատարողը ստանձնում է կատարել Արտաշատ համայնքի և թվով 37 վարչական բնակավայրերի պատճենահանող մեքենաների ընթացիկ վերանորգման, լիցքավորման և պահպանման ծառայությունների մատուցումը:
Կնքված պայմանագրով սահմանված է՝ Պատվիրատուն մեկ աշխատանքային օր առաջ կատարողին ծանուցում է քարթրիջների լիցքավորման տպիչ մասերի փոխարինման քանակի և գտնվելու վայրի մասին: Կատրողը ծառայությունը մատուցում է Արտաշատ համայնքի՝ ք. Արտաշատ և 37 վարչական բնակավայրերում: Կատարողը պարտավոր է ծանուցումը ստանալու օրվանից հաշված հաջորդ աշխատանքային օրը կատարել ծառայությունների մատուցումը:
Պայմանագրի շրջանակներում Ձեզ 26.02.2026թ ,27.02.2026 թ, 06.03.2026 թ 09.03.2026 թ ծանուցվել է առկա քարջրիջների լիցքավորման մասին, սակայն չեք ներկայացել և չեք իրականացրել ծառայությունների մատուցումը:
19.03.2026 թ համայնքի ղեկավարի Ե-1472 գրությամբ կրկին ծանուցվել է Ձեզ առաջարկելով կատարել պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները :
20.03.2026թ. համայնքի ղեկավարի Ե-1512 գրությամբկրկին անգամ ծանուցվել է Ձեզ առաջարկելով կատարել պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները :

Հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 21-ի պատասխանատու ստորաբաժանման արտահերթ նիստի թիվ 1 որոշումը Արտաշատի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ 2026 թվականի ապրիլի 21-ին լուծում է ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/03 ծածկագրով պայմանագիրը:
2. «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 10.2 , 10.6, 10.7, 10.8 կետերը , Կատարողի կողմից ներկայացված պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները , ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերը ՝ Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ներկայացնում է գրավոր՝ ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կամ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը գրավոր ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի կամ որակավորման ապահովման վերադարձման մասին գրավոր տեղեկացնում է՝

- կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ապահովման վերադարձման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում կցելով վճարումը հիմնավորող հայտով ներկայացված փաստաթղթի պատճենը.
- բանկային երաշխիքի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ երաշխիքը թողարկած բանկին՝ ապահովման վերադարձման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում.
-տուժանքի ձևով ներկայացված ապահովման դեպքում դեպքում՝ այն ներկայացրած մասնակցին՝ ապահովման վերադարձման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

Ելնելով վերոգրյալից կատարողի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ՝ վճարման պահանջով ներկայացնել բանկ և գրավոր տեղեկացնել կատարողին , մինչև օրենքով սահմանված կարգով կատարողին ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը, վճարելու պայմանագրի կատարման ապահովման 800000 /ութ հարյուր հազար/ ՀՀ դրամը և որակավարման ապահովման 1200000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարները Պատվիրատուի 900415151472 հաշվի համարին:

Հարգանքով

Արտաշատ համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

Կատ. Փ. Հակոբյան
Հեռ. 043-12-12-02